

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն.

Մեծաւ ուրախութեամբ յիշատակագրում ենք, որ Նոյեմբեր ամսում «Արարատի» մէջ կարդացած հրաւերը ուժգին արձագանք է գտել մեր առաջարկութեան արժանիքը և մեծ նշանակութիւնը գնահատող հաստատութիւնների կողմից, որոնք սկսել են իրանց Ս. Աթոռի մատենադարանին ուղարկած նուէրներով նպատել մեր ցանկացած ազգային մատենադարան կազմելու նպատակին: Այգ հաստատութիւններն են Վիեննայի Մխիթարեանք և Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակչական ընկերութիւնը:

Հրատ. ընկերութիւնը ուղարկել է իր այս տարուայ հրատարակած գրքերը թուով 11 սկսած թիւ 50—61: Յանկալի էր, որ նախընթաց համարներից ևս մի մի օրինակ ուղարկուէր: Ստացած գրքերն են.

1. Սասմայ Ծռեր, Գարեգին սարկաւազի:
2. Զաւախքի բուրմունք, Ե. Լալանցի:
3. Մտաւոր, բարոյական, փիղիքական կրթութիւն, Սպենսերի, Թարգ. Մկրտիչ Ղազարեանցի:
4. Մըռռան, Օ. Ի. Շմիտզ. Թարգ. Ա. Քալանթար.
5. Խան. Միրան, գրեց Սէյլան:
6. Տարաւ-Բուլբա. Թարգ. Մ. Սքեղեան:
7. Երկու քոյր. Ղ. Աղայեանցի:
8. Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ:

9. Սիրաբ և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ. փառակազմի կարմիր լաթով:

10. Բառււ Բրօլէր, փորձանքների բժշկարան. Թարգ, Ֆրանս. Ք. Օհանեան:

11. Շէկսպիրի Մակբեթ. Թարգ. Ստ. Մալխասեանց:

Այս գրքերը երեք կարգի կ'արելի է բաժանել. երեքը նոր լոյս տեսած գրքեր են, երեքն կրկնակի հրատարակութեամբ լոյս տեսածներ և հինգը Թարգմանութիւններ են: Բոլորն էլ իբրեւ ժողովրդական ընթերցանութեան գրքեր յարմար են և արժանի ամենայն գովասանքի: Երկար կանգ առնել գրքերից իւրաքանչիւրի արժանիքի կամ պակասութեանց վրայ թէ ժամանակի և թէ տեղի սղութեան պատճառաւ անկարող ենք. այդ մենք կանենք երբ յարգելի ոնկերութիւնը իր հրատարակութիւնները լոյս տեսնելուց իսկոյն Մատենադարանին կուղարկի. այս անգամ կը բաւականանանք լոկ մի քանի ընդհանուր դիտողութիւններով:

Խան-Միրան պատմական բովանդակութեամբ կենդանի և աշխոյժ գրչոյ դրած մի հօգրիկ պատկեր է, վերցրած Թահմազ-Շահի վասպուրականի արշաւանքից, հետեւապէս տառնութեորդ գարու առաջին կիսի մի սահմանափակ պատկերն է մեր առաջ դրած: Երբ Պարսիկները օրէցօր զօրացող օսմանցիներին տեղի տալով աստիճանաբար կորցրին իրենց իշխանութիւնը Հայաստանի վրայ, դեռ երկար ժամանակ միշտ նորից շունչ առնելով մարանչեցին կորցրածը յետ ստանալու համար և Հայաստանը ծառայելով իբրեւ պատերազմի դաշ. բազմիցս ոտի տակ տրուեց երկու կողմի վայրենի հրօսակներից, բազմիցս սովի, սրածութեան մատուցեց: Թաշնամիների սրերը արիւն Թալիւլուց բթացան, բայց դժբախտաբար Հայի օրհասական յուսահատութիւնը, անհամբերութիւնը երբէք չհասաւ: Փայլուն աստղերի նման երբեմն երբեմն թմրութեան մէջ ընկած ժողովրդի միջից դուրս էին գալիս անհատներ, որոնք ձգտում էին մեռելութեան մէջ ընկղմած ամբոխին սթափացնել, շարժել. բայց ոչ մի տեղ արձագանք չգրտնելով յուսահատուած կամ օտարութեան էին դիմում կամ թշնամիների գիրկն էին ընկնում և իրենց բարկութեան բոլոր

Թոյնը նոյն իսկ դարձեալ հայի գլխին թափում: Ահա մի այդպիսի անձնաւորութիւն է ներկայացրել մեզ թէև խիստ փոքր շրջանակի մէջ Սէյրանը իր խան Աիրանով:

Սասմայ ծուրը և Չաւախքի բուրմունքը հայ ժողովրդի մէջ դարուց ի դարս սերունդից սերունդ պատմուած և երգուած բանահիւսութեան փշրանքներն են և առաջին անգամ գրի առնուած: Նոքս իբրև ժողովրդական գրականութեան նիւթ շատ հետաքրքրական են և ունին բարձր արժէք, բայց իբրև նիւթ բառբառների ուսումնասիրութեան, ժողովրդագրութեան, տեղագրութեան պակասաւոր են և քիչ են համապատասխանում այն ծրագրին ըստ որում պահանջւում է նման նիւթերի ժողովելը Եւրոպայում: Յսնկալի ու անհրաժեշտ էր, որ մերոնք էլ ժողովրդական նիւթեր ժողովելիս նախապէս ծանօթանային նոյն նպատակի համար առաջարկած ծրագրերին և ըստ այնմ՝ առաջնորդուէին: Այդ նիւթերը մեզ համար երբէք այն նշանակութիւնը չեն ունենալ, եթէ նիւթերին կցուած չլինին աշխարհագրական, կենսագրական (ով է պատմողը), ազգագրական տեղեկութիւններ և որ գլխաւորն է եթէ ժողովողը չափազանցութեան հասցրած մանրակրկրութեամբ ուշադրութիւն չի դարձնիլ գաւառական բառբառների հնչիւնական (phonetique) նրբութեանց վրայ և իրենից առաջարկած ու բացադրուած նշաններով չի որոշիլ այդ նրբութիւնները: Մենք գնահատում ենք օրինակի համար որոշ չափով որ, Նաւասարգեանի ժողովրդական հեքեաթների ժողովածուն ինչ չափով նոքա մեզ կը ծառայեն մեր ժողովրդի հոգեկան կեանքը, նրա աշխարհահայեցողութեան աստիճանը այլ և այլ երևոյթների նկատմամբ և այլն, բայց բառբառներ ուսումնասիրող մի անձն երբէք չի կարող հիմնուել նորա վրայ:

Գրախօսի ընտանիք, Աիրաք և Սամուէլ երկուսն էլ զարգարուած մեր պաշտելի Հայրիկի պատկերով նորից լոյս ածելով և ժողովրդին միջոց տալով, որ նա ի մօտուց ճանաչի, սքանչանայ իր սիրած Անձի ներքին հոգեկան աշխարհահայեցողութեան հետ, ի մօտուց լսի հիանայ նրա մեղուաբան բառբառով Հրատարակչա-

կան ընկերութիւնը լրացրել է մեր բոլորիս ջերմ բաղ-
ձանքը:

Հետեւեալ գրքոյկը մեր ամենաթաղովրդական գրող և բանաս-
տեղծ Վ. Աղայեանցի «Երկու Քոյր»-ն է, որի առաջի հրատարա-
կութիւնը վաղուց սպառուած լինելով մեծ պահանջ էր զգաց-
ւում:

Հինգ թարգմանած գրքոյկների մասին կարելի է ասել, նոքա
իրբև յայտնի և հռչակուած հեղինակների գործքեր հանրա-
մարդկային սեփականութիւն են և նոցա թարգմանութիւնը այն-
քան անհրաժեշտ մեր գրականութեան համար ինչքան մեր գը-
րականութիւնը դեռ աղքատ է և կարօտ ընտիր օրինակների:

Սոյն համառօտ տեղեկութեամբ վերջացնում ենք այս անգամ
Հրատ. ընկ. 1892 թ. հրատարակած գրքերի մասին մեր ասելիքը
դանկալով ի բոլոր սրտէ ընկերութեան իր հանրօգուտ և ազնիւ գոր-
ծունէութեան մէջ յարաւուրութիւն և սպասելով, որ ընկերութեան
յարգելի խորհրդի անգամները ուշադրութեան կառնեն անցեալ
տարուայ նոյեմբեր ամսում «Արարատի» մէջ մեր առաջարկու-
թիւնը՝ ընկերութեան հրատարակած բոլոր գրքերի արտաքին ձևի
մէջ միակերպութիւն պահպանել, որով նոցա գրքերը մեր մատե-
նագարաններում մի առանձին զարդ կրկաղմեն:

Այժմ անցնենք Վիեննայի Մխիթարեանց Ս. Աթոռի Մատե-
նագարանին ուղարկած նուէրներին:

1. Das Etschmiadzin—Evangeliar.

Beitrag zur Geschichte der armenischen, ravennatischen und
syro—aegyptischen Kunst.

Von Dr. Iosef Strzygowski, Wien, 1891. Տպագրութիւն և հրա-
տարակութիւն Վիեննայի Մխիթարեան ուխտի:

2. Առաջին գրքի հայերէն թարգմանութեան մի օրինակ. էջ-
միածնի Աւետարանը. ուսումնասիրութիւն հայկական, ռաւեն-
նական և ասորա-եգիպտական գեղարուեստի: Գրեց Դր. Յուսէփ
Սորիզիգոյսկի թարգմանեց Հ. Բառնաբաս Վ. Պիլէզիկճեան:

18 զնկատիպ պատկերով և 6 լուսատիպ տախտակով. Վիեն-
նա 1892. գինը 5 ռուբլի:

3. Դասաւորութիւն Ռուքենեան դրամոյ. գրեց Հ. Կղիեմէս Վ. Սիպիլեան: Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք (79 պատկեր) և 53 պատկերօք ի բնագրին, որոնց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ. Վիեննա. 1892. գինը 3 ռ. երեքն էլ, մանաւանդ «Էջմիածնի Աւետարանները» ճոխ փառակաղմեն, իսկ իբրեւ տպագրութեան արդիւնք նման ընտիր տպագրած գրքեր մենք չունինք: Կարելի է վստահութեամբ հաստատել, որ «Էջմիածնի Աւետարան»-ի հայերէն հրատարակութիւնը իր տեսակում մեր բոլոր տպագրած գրքերի մէջ տառերի նրբութեամբ, մաքրութեամբ, թղթի կատարելութեամբ ուղղակի առաջին տեղն է բռնում: Ոչ մի ջանք և ծախս չխնայելով Մխիթարեանք ցանկացել են հայկական հնութեամբ հետաքրքրուող իւրաքանչիւր մի անձի սեղանի և գրադարանի սիրուն զարդ տալ, որը բացի այդ յատկութիւնից իր նիւթի բովանդակութեամբ ևս արժանի է լուրջ ուշադրութեան:

Դասաւորութեան Ռուքենեան դրամոյ գրքի մասին պ. Աղ. Երիցեանը անցեալ տարուայ «Արձագանքի» մէջ¹ խօսեց բաւական գովեստով, միևնոյն ժամանակ յարձակուեց Մխիթարեանց վրայ, որ նորա իբր թէ հալածել էին Հ. Կ. Սիպիլեանին: Հ. Գալամբարեանը լուրջ բայց կծու կերպով պատասխանեց նրա բարգաժմեղադրանքներին. իսկ Էջմիածնի Աւետարանը ինչքան ինձ յայտնի է դեռ գրախօսութեան չէ ենթարկուել, հետևապէս դեռ անձանօթ կովկասցի հայերիս, ուստի նրա վրայ աւելի երկար կանգ կառնեմ:

Հեղինակ պ. Ստրիգիգովսկու յառաջաբանից իմանում ենք, որ նա բիւզանդական գեղարուեստը ուսումնասիրելու նպատակաւ 1888-ի Օգոստոսից մինչև 1890 Ապրիլ ամիսը ճանապարհորդել է հանգիպելով Սելանիկ, Աթոս լեռու. Աթէնք, Յունաստան, Կ. Պօլիս, Քոբր Ասիայի ամերը և կղզիները, Կովկաս, Մոսկվա և Պետերբուրգ: Նա մտադիր է գրել Բիւզանդական գեղարուեստի

¹ Ծան. Համարները չեմ յիշում կարծում եմ լոյս տեսան. Յուլիս և Օգոստոս ամիսների համարներում:

ընդարձակ պատմութիւնը, իսկ առայժմ՝ փոքր աշխատանքներով ձգտում է հասարակութեան հետաքրքրութիւնը շարժել, ուստի հրատարակել է «Լժմիածնի Աւետարանը»: Ս. Լժմիածնի բոլոր շինութիւնները նկարագրելուց յետոյ տալով նոցա յատակագիծը հեղինակը խօսում է գեղարուեստական մի քանի յիշատակարանների մասին:

Ս. Տաճարի ներկայ շինութիւնը նոր է և անհիմն կը լինէր աշխատել վերակազմելու Ս. Գրիգոր լուսաւորչի հիմնած տաճարի մնացորդները, ինչպէս փորձել է Dubois¹: Եկեղեցու յատակագիծը քառակուսի է բոլորովին համեմատ բիւզանդական այն եկեղեցիների գաղապարին, որ սկսեցին շինել Յուստինեան ժամանակից ի վեր, բայց հիւսիսային, հարաւային և արեւմտեան կողմերի կողակները (apside) բուն հայկական ձև ունին: Մովսէս կաթողիկոսը 1627 թ. սկսեց վերականգնել Շահ-Աբասի ձեռքով վնասուած տաճարը, որը վերջացրեց Եղիազար կաթողիկոսը 1682 թ.² իսկ զանգագատունը շինուել է 1654 թ.:

Հին քրիստոնէական հայկական յիշատակարաններ չըկան, բայց դորա փոխարէն պահուած են մի քանի յունական յիշատակարաններ: Նոքա գտնուում են եկեղեցու հիւսիս արեւելեան որմի վրայ: Մէկը մի բարձրաքանդակ է ունի 0,65 մետր լայնութիւն և 0,47 մետր բարձրութիւն և յոնիական սիւնով երկուսի է բաժանած: Այդ բարձրաքանդակի

1. Dubois de Montpéreux, Voyage autour du Caucase. Paris 1839. III. էջ 371.

2. Հեղինակը սխալմամբ առում է «Շահ-Աբաս 1604-ին եկեղեցին ու վանքը կործանեց և փլատակները տարաւ Նոր-Ջուղայում եկեղեցի շինեց»: Մինչդեռ Առաքել պատմագրից յայտնի է, որ Շահ-Աբասը Նոր-Ջուղա տարաւ միայն տաճարի մի քանի քարերն, թւով 15 հատ, որոնք ոչ մի կերպ չէին կարող եկեղեցու քայքայումը պատճառել, (Տէս Առաքել պատմ. Վաղարշապատ 1884. էջ 151, 161, 232), որովհետեւ Խօջայ նազարը և հայ մեծամեծները արգելք եղան նրա մտադրութեան իրագործման.

վրայ երկու պատկերներ կան. մէկը միրուքաւոր, երկար մազերով ամօռի վրայ նստած Poulos (գրած է յունական Պաւլոս) անունով մարդ է, միւսը կին է Thekla (Թեկլա) անունով, երկար շաւիկեզ մի ձեռքը կրծքին, միւսը յետեւ՝ մէջքին դրած նայում է նրստած մարդուն, որ ձեռները մեկնած կարծես միտք ունի նրան իր գրգի մէջ ընդունելու: Նոյն տեսարանը և նոյն անձանց ներկայանող ուրիշ յիշատակարանների համեմատութիւնից պէտք է այդ գործը Գրիստոսի և կամ Զ. գարում ծագած համարել:

Երկրորդ յիշատակարանը մի արձանագրութիւն է փորուած 0,98 մ. երկայն, և 0,52 մ. բարձր. քարի վրայ: Գրուածքն է Boethi pantas tus eychomenus en te ekklesia—օգնեայ ամենայն ազօթողաց յեկեղեցւոջ. ենթական պակաս է:

Այդ արձանագրութիւնը գտնուում է երկու համակենդրոն շրջանների մէջ: Շրջանները ամփոփում են երկու իրար հոտանող խաչաձև շառաւիղներ և նոյա կազմած ուղիղ անկիւններում կարդում ենք Iesu Zibithain: Վերջին անունը հին հայկական պիտի լինի. նա առաջ է գալիս Մ. Խորենացու (Գ. գլ. 1, 6) և Փ. Բուզանդի (Գ. գլ. ԾԵ — ԾԷ) մօտ, ուստի կառելի է ընդունել որ եկեղեցին շինել տուող քահանայի անունն է: Բացի այդ շրջանի ստորին կողքերին և ներքեւում կարդում ենք Kyri eleyson ton dulon su Archian k(ai) ky(rie) ele(yson) Elpidin Daniel. Tirer, Gari-nikis==Տէր ողորմեայ ծառայի քում Արքեայ Եւ Տէր ողորմեայ Եւպիդեայ) Գանիել, Տիրեր, Գարինիկիս — անուններ են: Այս արձանագրութեան ժամանակն էլ պիտի և կամ Զ. գարը համարել: Եզրակացութիւնն է, որ Հայերը Հայոց գրերի գիւտից յետոյ էլ գեւ շարունակում էին յունարէն գրեր և լեզու գործածել: Սրան փայլուն ապացոյց կարող է ծառայել երկրորդ արձանագրութիւնը:

Ս. Էջմիածնում ձեմարանի պարտիզի գաւթում ընկած են չորս նշանաւոր խոյակներ կողովի ձևով, որոնք պէտք է շինուած լինին Յուստինիանի օրով գործածութեան մէջ մտած խոյակաւոր սիւների ազդեցութեան տակ: Չորսն էլ երկու ձև մենագրեր (Monogramme) ունին, որոնց մեկնութիւնն է Narsu Katholiku (Նարսու

կաթողիկոս): Հեղինակը պատմական հաստատ փաստերով ապացուցանում է, որ այդ մենագիրը պատգանում է Ներսէս Գ Շինող կաթողիկոսին (650—661): Խոյակները ճեմարանի գաւիթն են բերուած Ս. Էջմիածնից երևան տանող ճանապարհի վրայ եղող «Հանգած եկեղեցի» կոչուած տեղից 1: Սերէոսից մենք իմանում ենք, որ Ներսէս Գ. կաթողիկոսն շինեց մի եկեղեցի «ի վաղարշապատ քաղաքին ի վերայ ճանապարհին» և հաւանական է ընդունել որ չորս սեան խոյակները Ներսէս կաթողիկոսի շինած եկեղեցունը լինին: Հայաստանում հին յիշատակարանների բացակայութիւնը ստիպում է հեղինակին հետեցնելու, որ Հայերը նախաքրիստոնէական ժամանակում միօրեւէ ուրոյն ոճ չեն հրնարել, այդ աստիճանին նոքա հասել են միայն քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, այն էլ ըստ Շնագէի 2 եօթերորդ դարում: Քրիստոնէական ժամանակում յունական ազդեցութեան տակ զարգացել է Հայաստանում մի որոշ ուրոյն ճարտարապետական ոճ ըստ որում շինուած են ամենահին համարուած եկեղեցիները՝ ս. Հռիփսիմէի 618, ի. Գայանէի 630 և Ուղունլարի 718—729 եկեղեցիները:

Յ.

(Հարունակելի):

1. Այս եկեղեցու աւերակները յայտնի են Ժողովրդի մէջ «Խանգարած եկեղեցի» անունով, իսկ Թարգմանութեան մէջ «ruinierte Kirche» դարձուածը «Հանգած եկեղեցի» է Թարգմանած:

2. Schnaase, Geschichte der bild. Künste 2 A. III էջ 325.